

տեղ մը չգտնեն, ուր հանգիստ տար գլխոյն, եւ իւր բովանդակ կենսերը բացօթեայ եւ օտար-ներու մէջ անցնեն: Եւ պայտա խօսեցաւ իւր վերջին տիրոջը, մարդ մը՝ որ շուկայի մէջ աւազ կը ծախեր եւ կամք չուներ անով հարստանալու:

«Ինչո՞ւ զիս կ'անարգէք: Ինչո՞ւ կը հեռա-ցընէք զիս ձեզմէ իրեւն անիծեալ բան մը:»

«Ո՛հ ի՛նչ ընեն զքեզ, սիրելի խղի՛ւս, երբ ո՞ր ո՞ք կ'ընայ զքեզ գործածել:»

«Եթէ այնպէս է, բեր ինծի փողերիկ ռուս աղայ մը, բաց իւր անարատ սիրտն եւ զիս մէջը թաղէ թերեւս անմեղ մանկիկն զիս կը հիւրըն-կայէ եւ կը խնամէ, թերեւս կը մեծցընէ զիս եւ յապագային ինծի հետ ինք զինք աշխարհի կը ցուցնեն եւ զիս չ'անարգեր:»

Այսպէս ալ եղաւ: Աւագաժամաւոր գտաւ փողերիկ ռուս մանուկ մը, սիրտը բացաւ եւ խղի՛ւր մէջը թաղեց:

Հիմայ փողերիկ մանուկ կը մեծնայ եւ իրեն հետեւեալ խղի՛ւր: Մանուկն այր կատարեալ պիտի ըլլայ, եւ զօրաւոր խղի՛ւ մը պիտի ունե-նայ: Այնուհետեւ ամէն ստույթիւն, ամէն նեն-գութիւն եւ ամէն բռնութիւն պիտի անհետա-նայ: Վասն զի խղի՛ւն այնուհետեւ երկնոս պի-տի չըլլայ, եւ նոյն իսկ մարդիկներու պիտի տիրէ:



ԱՅԼԵԱՅԵԼԻՔ

ՆՈՐԱՐԱՐՈՒՐ

Կրօնականութիւնը թագաւորն է:

Ի ռուսոյն «Պրիդիշ Մուզեում», վարչութիւնն հեռագիր ժ'ընդունեցաւ Եգիպտոսէն, որ շատ հե-տաբարեկան զիտա մը կ'աւանդէ: Աշտանոր հնա-գետք, որ Եգիպտոսի մէջ հնութիւններ կը գտնուեն, կը կարծեն որ Կղեսպատար թագաւորն զրազող գտած են: Այս գերեզմանն երկրի երե-ւնի 35 սոթ խոր է, 10 սոթ երկայն է 2 1/2 սոթ լայն: Գազաղն բիրամբտի ձեւով է եւ հիւանդի փորագրութիւններով լի, սրտը կը ներկայացընեն հինգ կին, հինգ գաղմիկայ պսակ եւ հինգ աղայ: Տղոյն մանր մերկ են, ոմանք զգեցեալ: Իսկ պսակներու մէջ կայ խաղող: Այս գիւտն ընդունեն հեռագրած ժամանակ կը սպասէին եգիպտական պաշտօնէին մը զպաշտեան, որպէս զի հրաման տրուի գերեզմանն ամբողջ փորելու: Այժմ կ'իմա-նանք՝ որ գազաղը բացած են եւ սպիղիս զարգեր գտած: Եգիպտական կառավարութիւնը կ'ուզէ դա-զաղն իրեն աւանդել:

ՏՆՏԵՍՈՒԿՆՆ

Որովհետեւ իմաստը մնալ տեսն:

Ոսկեծուկն, որ տներու մէջ ապակեայ փողերիկ աւազաններու մէջ կը սնուցուի, իրեն սնուցիչնե-րուն ոգիտութիւնէն ձմեռները շատ եր կրէ: Վասն զի քիչերուն ծանօթ է, որ Նոյնմերենն մինչեւ փետրուարի վերջը իրեն ամենեւեւ կը հարկաւոր չէ: Ուստի այս շրջա ամիսներու մէջ ամենեւին պէտք չէ կեր առլ, ապա թէ ոչ՝ ոսկեծուկը կըր առնելով՝ պնդութիւն կ'ունենայ, որ իրեն համար մահ է: Բայց ջուրը պէտք է երկու օր անգամ մը փոխել, միտ գնելով որ ջրոյ ջրմուխիւն միւսնոյն ստահանի ըլլայ հին ջրոյն հետ: այս վարձանա-պէտք է նոր ջուրը միւսնոյն սենեկին մէջ, ուր է ձկան անօթն, երկայն առնել պահել, մինչեւ որ ջուրը նոյն ջրմուխիւնն առնեն, իսկ Մարտ, Ա-պրիլ եւ Մայիս ամիսը մէջ շատ քիչ եւ երբեմ-նով աւելի կըր տարւոյ է, որովհետեւ ձկան ստա-սեցն, որ ամիսներ ծոմ պահած է, հետագհետեւ պիտի վարժի կերակրել:

Սարգիսը ճնշել:

Սարգիսը տներէն ջնջելու ապահով միջոցն է անընդհատ աւելի իրենց օտարներ: Բայց ասիկէ՝ շատ օգտակար է այն տեղերն, ուր յաճախ իրենց օտարները կը ձգեն, թըլել ջրով մը որուն մէջ լիւրջ մը պղնձի կամ երկաթի արջապ (vitriol) լուծու-ած ըլլայ:

ՄԵՆՐԱՐԱՐՈՒՐ

Թողթէ ճաշարան:

Վանուկը անգլիական թղթակերտ ճաշա-րան մը շինուեցաւ, որուն պատերը թղթախաւէ է, բայց բարակ տախտակով դրուագեալ՝ որ օդոյ եւ աներեւոյց անհարթութեանց դժմ կենայ: Թուղ-թը ջրոյ եւ խմուսութեան դժմ ապահովեցաւ: Գտներն ու տանիքն ձանկերով եւ երկթերով ի-րարու հետ կը կապուին: Բուն ճաշարանը 150 հո-գի կ'առնու, 30 մեք երկայն է 6 մեք լայն, 22 պատուհան ունի 6 երգիի եւ երկու վտարան. ունի նաեւ խոհանոց եւ սաւան: Բովանդակ այս շէնքը 15,000 մարբով շինուած է:

Միլիանաւոր թաղարք:

Միացեալ-Նահանգաց Գլխաւոր (Cleveland) քաղաքը 6345 աւելի միլիոնատեր թաղարք-ցի ունի, որոնց առաջինը John D. Rockefeller տարեկան 9,000,000 տարար մուտք ունի եւ ուրիշ մը (H. M. Flagler) 3,000,000. Oliver Payne-րովանդակ ստացուածքը 22,000,000 տարար եւ, Selah Chamberlain-ը 16,000,000, Anna M. Harkness տիրելու՝ 28,000,000, իսկ Jephtha Wa-ճօքը՝ 7,000,000 տարար: 2 միլիոն 5 միլիոն տարար ունին շատերը:

